ք.Գյումրի - 17.12.2016 թ.

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

12 - րդ դասարան

ՏԱՐԲԵՐԱԿ 2

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (12 միավոր)

ա. *Նշել ճիշտ պատասխանը. 1–8–րդ առաջադրանքներ:* (0,25 X 8 = 4 միավոր)

1. Երբվանի՞ց է լույս ընծայվել հայոց առաջին պարբերականը:
1) 1774 թ. 3) 1794 թ.
2) 1783 թ. 4) 1799 թ.

2. 17-րդ դարում Նոր Ջուղայում ո՞ւմ ջանքերով դպրոց հիմնվեց:
1) Խաչատուր Կեսարացու 3) Զաքարիա Քանաքեռցու
2) Հովհաննես Ջուղայեցու 4) Առաքել Դավրիժեցու

3. Ե՞րբ վերացվեց Հայկական մարզը:
1) 1836 թ. մարտի 11-ին 3) 1844թ. ապրիլի 10-ին
2) 1840 թ. ապրիլի 10-ին 4) 1849 թ. մարտի 11-ին

4. Ե՞րբ հիմնվեց Երևանի նահանգը:
1) 1840 թ. 3) 1846 թ.
2) 1844 թ. 4) 1849 թ.

5. Որտե՞ղ է հրատարակվել <<Համատարած աշխարհացոյց>> մեծադիր քարտեզը:
1) Կալկաթայում 3) Ամստերդամում
2) Մադրասում 4) Վենետիկում

6. Ո՞ւմ անվան հետ է կապված հեռավորության վրա գունավոր պատկեր հաղորդելու առաջին փորձի կատարումը:
1) Արտեմ Միկոյանի 3) Հովհաննես Ադամյանի
2) Անդրանիկ Պետրոսյանցի 4) Արտեմ Ալիխանյանի

7. Ո՞վ էր Խորհրդային Հայաստանի պետական զինանշանի հեղինակը:
1) Հակոբ Կոջոյանը 3) Ալեքսանդր Թամանյանը
2) Մարտիրոս Սարյանը 4) Երվանդ Քոչարը

8. Ո՞րն է հայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականը:
1) <<Ազգասեր>> 3) <<Արարատ>>
2) <<Ազդարար>> 4) <<Բազմավեպ>>

բ. Լրացնել պատասխանը: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը:

1. Մատթեոս Ուռհայեցի	ա. «Հայոց պատմություն»
2. Ստեփանոս Օրբելյան	բ. «Տարեգիրք»
3. Վարդան Արևելցի	գ. «Պատմութիւն»
4. Արիստակես Լաստիվերցի	դ. «Ժամանակագրութիւն»
5. Թովմա Արծրունի	ե. «Պատմութիւն նահանգին Սիսական»
6. Կիրակոս Գանձակեցի	զ. «Արծրունիների տան պատմություն»
	է. «Տիեզերական պատմություն»

2. Կատարել համապատասխանեցում:

1	2	3	4	5	6

Իրադարձություն	*Տարեթիվ*
1. ՀՀ Սահմանադրության ընդունումը	ա) 1992 թ. նոյեմբեր
2. ՀՀ վարչատարածքային փոփոխությունների իրականացումը	բ) 1990 թ. նոյեմբեր
3. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն	գ) 2001 թ. հունվար
4. ՀՀ-ի լիիրավ անդամակցությունը Եվրոխորհրդին	դ) 1995 թ. հուլիս
5. սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը	ե) 1995 թ. դեկտեմբեր
6. եռաստիճան դատական համակարգի ներդրումը	զ) 1999 թ. հունիս
	է) 2005 թ. նոյեմբեր

1	2	3	4	5	6

3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) Հայկական պատվիրակության կազմում Հովհաննես Թութունջի վարդապետի ժամանումը Փարիզ:
2) Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մահը:
3) Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի ազատագրական գործունեության սկիզբը:
4) Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի բանակցությունները Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ:
5) Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմությանց»-ի տպագրությունը նրա կենդանության օրոք:
6) Խաչատուր Գաղատացի կաթողիկոսի նամակը Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորին:

4. Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) Մանուկ Բանեյանի կողմից կամավորական ջոկատի ստեղծումը:
2) Կապիտան Սումբատովի գլխավորած հայ կամավորական առաջին դրուժինայի ստեղծումը:
3) Մարտիրոս Վեքիլյանի աշխարհազորայինների գործունեությունը Լոռի-Փամբակում :
4) Գրիգոր վարդապետ Մանուչարյանի հեծյալ ջոկատի մասնակցությունը Գանձակի գրավմանը:
5) Հակոբ Հարությունյանի հերոսական արարքը:
6) Ջումշուդ Շահնազարյանի հեծյալ ջոկատի մասնակցությունը Ասկերանի և այլ ճակատամարտերին:

գ. Լրացնել կամ գրել պատասխանները: ***(1 X 4 = 4 միավոր)***

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Արևմտահայերի 2-րդ համագումարի հրավիրումը Երևանում
բ) Բոլշևիկների Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) ստեղծումը
գ) Արևելքի ժողովուրդների համագումարի հրավիրումը Բաքվում
դ) Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումը
ե) Անդրանիկի զորախմբի դեպի Արցախ առաջխաղացման կասեցումը անգլիացիների միջամտությամբ

1	2	3	4	5

2. Կրթական հաստատությունները դասավորել ըստ դրանց հիմնադրման ժամանակագրական հաջորդականության:

ա) Ներսիսյան դպրոց
բ) Աղաբաբյան դպրոց
գ) Լազարյան ճեմարան
դ) Շուշիի թեմական դպրոց
ե) Երևանի թեմական դպրոց

1	2	3	4	5

3. *<<Պետք է ստույգը գրել, չեղածը չավելացնել, եղածները չպակասեցնել>>:*
Հայոց ո՞ր պատմիչի խոսքերն են բերված այստեղ:

_____

4. Արքաների գահակալման տարիները համապատասխանեցնել նրանց անուններին:

1. Մենուա	ա. Ք. ա. 835-825 թթ.
2. Սարդուրի I	բ. Ք. ա. 825-810 թթ.
3. Սարդուրի II	գ. Ք. ա. 810-786 թթ.
4. Ռուսա II	դ. Ք. ա. 786-764 թթ.
5. Արգիշտի I	ե. Ք. ա. 764-735 թթ.
	զ. Ք. ա. 685-645 թթ.

1	2	3	4	5

դ. Գրել պատասխանները: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:

ա) Նշանավոր երկրաբան, բյուրեղաքիմիկոս Անդրեաս Արծրունին համարվում է ժամանակակից օրգանական լուսաքիմիայի հայրը:
բ) Հայ ազգային բնանկարի հիմնադիրը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի սան Գևորգ Բաշինջաղյանն է:
գ) 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին ասպարեզ է գալիս հայ բանաստեղծների նոր սերունդ՝ Սմբատ Շահազիզ, Միքայել Նալբանդյան, Ռափայել Պատկանյան, Հովհաննես Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյան և ուրիշներ:
դ) Վահան Տերյանին մեծ ճանաչում է բերում <<Խաղաղ արշալույսներ>> ժողովածուն:
ե) Բյուզանդիայի պատմության և հայոց միջնադարի ուսումնասիրության ասպարեզում ծանրակշիռ ներդրում է համարվում Նիկողայոս Ադոնցի <<Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում>> աշխատությունը:

2. Տրված պնդումներից որո՞նք են սխալ:

ա. Ք. ա. 401 թ. պարսից արքայի դեմ ապստամբում է նրա եղբայր Կյուրոս Կրտսերը:
բ. Պարսից բանակի դեմ ապստամբած զորաբանակի հրամանատարներից էր հույն գրող և զորավար Պլուտարքոսը՝ <<Անաբասիս>> աշխատության հեղինակը :

գ. 485 թ. Վահան Մամիկոնյանը մեկնեց Տիզբոն և պարսից արքունիքի կողմից հաստատվեց Հայաստանի տանուտեր:
դ. Ք. ա. 94 թ. հայ-պոնտական պայմանագրի համաձայն կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կոմագենեի վրա, որի տարածքը պետք է ստանար Պոնտոսը, իսկ շարժական գույքը և բնակչությունը՝ Հայաստանը:
ե. Դվինի 554 թ. եկեղեցական ժողովը պաշտոնապես ընդունեց հայկական տոմարը և իր որոշումներով ամրապնդեց Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը:

3. Բերված փաստարկներից ընտրել երկուսը, որոնք վերաբերում են 1917 թ. դեկտեմբերին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի կողմից ընդունված <<Թուրքահայաստանի մասին>> հրովարտակին:
ա) Հրովարտակով խորհրդային կառավարությունը ճանաչում էր Թուրքայաստանի (Արևմտյան Հայաստանի) հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև լիակատար անջատում:
բ) Դրա կենսագործման համար Ժողկոմխորհին անհրաժեշտ էր համարում ռուսական զորքի տեղակայումը Արևմտյան Հայաստանի մի շարք ռազմավարական կենտրոններում:
գ) Արևմտահայերի անձի և գույքի անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում էր հայկական ազգային միլիցիայի ստեղծում:
դ) Թուրքահայաստանի խնդրի վերջնական լուծումը թողնվում էր ԽՍՀՄ խորհուրդների համագումարին:
ե) Մինչև ԽՍՀՄ խորհուրդների համագումարի հրավիրումը Արևմտյան Հայաստանը մնում էր Թուրքիայի կազմում՝ <<ներքին լայն ինքնավարության>> պայմանով:

4. Բերված պնդումներից ընտրել երկուսը, որոնք վերաբերում են Կարսի պայմանագրին (1921 թ.):
ա) Կարսի կոնֆերանսը կայացավ 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին՝ Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ:
բ) Կոնֆերանսում Հայաստանի պատվիրակության ղեկավարն էր արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալեքսանդր Բեկզադյանը:
գ) Կարսում Հայաստանի և Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից դրվեցին Անիի ավերակները վերադարձնելու և Կողբի աղահանքերը շահագործման վերցնելու հարցերը, որոնցից մասամբ բավարարվեց միայն վերջին պահանջը:
դ) Կարսում Հայաստանին արված մասնակի զիջում էր նաև Տրապիզոնի նավահանգիստը հինգ տարով համատեղ շահագործման հանձնելու համաձայնությունը:
ե) Կարսի պայմանագիրը ստորագրվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին:

2) <<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (5 միավոր)

ա. ***Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – րդ առաջադրանքներ:*** **(0,5 X 4 = 2 միավոր)**

1. Ո՞ր ճակատամարտն է տեղի ունեցել 1389 թ.:

1) Մանազկերտի 2) Կուլիկովոյի 3) Անկարայի 4) Կոսովոյի

2. ԱՄՆ-ի ո՞ր նախագահի օրոք վերացվեց ստրկությունը.

1) Թեոդոր Ռուզվելտի
2) Ջորջ Վաշինգտոնի
3) Աբրահամ Լինկոլնի
4) Թոմաս Ջեֆերսոն

3. Ե՞րբ է Օկտավիանոսը հռչակվել ցմահ տրիբուն.

1) Ք.ա. 43 թ.
2) Ք.ա. 36 թ.
3) Ք.ա. 44 թ.
4) Ք.ա. 31 թ

4. Փետրվարյան հեղափոխության արդյունքում Ռուսաստանում՝

1) Տապալվեց Ժամանակավոր կառավարությունը, և իշխանությունն անցավ բոլշևիկյան կուսակցությանը,
2) Իշխանության գլուխ անցան հետադիմական քաղաքական ուժեր,
3) Իշխանության գլուխ անցան ժողովրդավարական քաղաքական ուժեր,
4) Հաստատվեցին բացարձակ միապետական կարգեր:

բ. Լրացնել պատասխանը: (1 X 2 = 2 միավոր)

1. Գործիչների անունները դասավորել ըստ գործունեության ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)

ա. Թոմաս Մոր
բ. Կիկերոն
գ. Պետրոս Աբելյար
դ. Ադամ Սմիթ
ե. Քսենոփոն
զ. Թովմա Աքվինացի

1	2	3	4	5	6

2. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. (1 միավոր)

ա. Առաջին 10-ը փոփոխությունները ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ
բ. Երկրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
գ. Պետրոս (Պյոտր) Մեծի կողմից կայսեր տիտղոսի ընդունումը
դ. Վիեննայի վեհաժողովը
ե. Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության լուծարումը Նապոլեոն
Ի-ի կողմից
զ. Ավստրիայի պարտությունը Պրուսիայի դեմ պատերազմում
է. Օտտո Բիսմարկի նշանակվելը Պրուսիայի առաջին նախարար

1	2	3	4	5	6	7

գ. Լրացնել պատասխանը: **(0,5 X 2 = 1 միավոր)**

1. Նշել երկու ճիշտ պնդումները:

ա) 1999 թ. հունիսին իտալական Բոլոնիա քաղաքում 29 երկրների կողմից ընդունված հռչակագրով հայտարարվեց միասնական կրթական (առաջին հերթին՝ բարձրագույն կրթության) տարածքի ստեղծման մասին:

բ) 1991 թ. ամերիկացի գիտնական Ս. Հանթինգթոնն իր հոդվածում տեսակետ էր հայտնում, որ ապագայում պատերազմները ոչ միայն չեն բացառվում, այլև սպասվում են ավելի խոշոր պատերազմներ՝ բախումներ քաղաքակրթությունների միջև:

գ) ԱՊՀ երկրներում ծավալված գունավոր հեղափոխությունների արդյունքում իշխանությունից հեռացվեցին Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի և Ղազախստանի նախագահները:

դ) Ազգերի ինքնորոշում հասկացությունն առաջին անգամ հնչել է 1815 թ. Վիեննայի վեհաժողովում, և գրեթե նույն ժամանակ էլ շրջանառության մեջ է մտել ազգերի ինքնորոշման իրավունք հասկացությունը:

ե) Նորագույն շրջանի ամենատարածված փիլիսոփայական ուղղություններից է էքզիստենցիալիզմը, որի հիմնադիրներն էին գերմանացիներ Ա. Շոպենհաուերը, Ֆ. Նիցշեն և ֆրանսիացի Ա. Բերգսոնը:

զ) 1947 թ. ՄԱԿ-ը որոշում ընդունեց Պաղեստինի տարածքում ստեղծել երկու պետություն՝ արաբական և հրեական, դրան հաջորդեց հրեաների Իսրայել պետության ստեղծումը 1948 թ.:

է) 2011 թ. Ռուսաստանի Դաշնությունը, օգտագործելով 2010 թ. ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրների նախաձեռնությամբ Կոսովոյի անկախության ճանաչման նախադեպը, ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը:

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 միավոր)

1.Արցախյան հիմնահարցը և ազատագրական պայքարը
ա/Արցախյան շարժման սկիզբը:
բ/Շարժման ընթացքը:
գ/Շարժման արդյունքները: